ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ը

12.08.2013 թվականի N 131-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 800-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 800-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների և գերակա խնդիրների իրականացումն ապահովելու նպատակով**

**Հրամայում եմ**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության ծրագրի /այսուհետ Ծրագիր/ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների ոլորտների միջոցառումների /հավելված N1/ և գերակա խնդիրների /հավելված N2/ վերահսկողների ու կատարողների ցանկը:
2. Սույն հրամանի N1 հավելվածում նշված վերահսկողներին ու կատարողներին՝ սահմանված ժամկետներում ապահովել հաստատված միջոցառումների կատարումը:
3. Սույն հրամանի N2 հավելվածում նշված կատարողներին՝ եռամսյակի ավարտից հետո 2-օրյա ժամկետում, համապատասխան վերահսկողների հետ համաձայնեցված, գերակա խնդիրների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (ՀՀԷԲՊՆ) աշխատակազմի զարգացման վարչություն:
4. ՀՀԷԲՊՆ աշխատակազմի ղեկավար Կ. Ղահրամանյանին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5-օրյա ժամկետում ապահովել տվյալ եռամսյակում Ծրագրի միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների կատարման ընթացքի մասին ամփոփ տեղեկանքի ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը թողնում եմ ինձ:

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված N 1

# Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունք | Վերահսկողներ | Կատարողներ | Ժամկետը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1/19. «Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական ակտի ընդունման արդյունքում կհստակեցվեն համապատասխան ֆինանսական միջոցներ՝ Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի նախագծային ժամկետի երկարաձգման ծրագրի աշխատանքների իրականացման համար | Ա. Գալստյան | Ատոմային էներգետիկայի վարչություն | օգոստոսի 3-րդ տասնօրյակ |
| 2/20. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կսահմանվեն պահանջներ, որոնք կնախատեսեն փոքր հիդրոէլեկտրակայանների համար «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների ժամկետի ավարտից հետո դրանց շահագործման նոր պայմաններ | Ա.Գալստյան | Զարգացման վարչություն | սեպտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3/21. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 12-ի N 580-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կհստակեցվեն լիազոր մարմին էներգամատակարարող կազմակերպության կողմից տեղեկատվություն ներկայացնելու գործընթացը, մասնավորապես, էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների բնորոշումները և սահմանումները | Լ. Շահվերդյան | Էներգետիկայի պետական տեսչություն | սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 4/22. «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ-ում նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման նպատակով իրավունքի տրամադրման գործընթացի | Ա. Գալստյան | Ընդերքի վարչություն | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կանոնակարգում, այդ թվում՝ արտադրանքի բաժանման պայմանների, կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանում, ՀՀ տարածքում նավթի ու բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների համար նախատեսված պայմանական տարածքների ամրագրում | | | |
| 5/23. «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կպարզեցվի էներգատեղակայանքների գործարկման գործընթացը, մասնավորապես, կնվազեցվի պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի թիվը | Լ. Շահվերդյան | Էներգետիկայի պետական տեսչություն | հոկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 6/24. «Մայրուղային գազատարների տեխնիկական շահագործման պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1438-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ելնելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ ուժը կորցրած կճանաչվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1438-Ն որոշումը, և կսահմանվեն մայրուղային գազատարների տեխնիկական շահագործման պահանջները | Ա. Գալստյան | Զարգացման վարչություն | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 7/25. «Մայրուղային գազատարներում անվտանգության պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի N 119-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ելնելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ ուժը կորցրած կճանաչվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի N 119-Ն որոշումը, և կսահմանվեն մայրուղային գազատարների անվտանգության պահանջները | Ա. Գալստյան | Զարգացման վարչություն | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ |

Հավելված N 2

# ՑԱՆԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

| Գերակա խնդիրները | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Վերահսկողներ | Կատարողներ | Ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1/5. Տարածաշրջանային ինտե-գրացում | - Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում | Ա. Սիմոնյան | Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն | Յուրաքանչյուր եռամսյակ |
| | - Վրաստան-Հայաստան տարանցիկ էներգափոխանակման վերաբերյալ համաձայնագրի կնքում | Ա. Գալստյան | Զարգացման վարչություն | Յուրաքանչյուր եռամսյակ |
| 2/6. Երկրաբանական տեղեկու-թյան հրապարակայնության ապա-հովում | - «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա օգտակար հանածոների հանքավայրերի և երևակում-ների անձնագրերի թվայնացում և թվայնացված երկրաբանական տեղեկության տեղադրում ինտերնետային կայքում | Կ. Ղահրամանյան | Ընդերքի վարչություն | Յուրաքանչյուր եռամսյակ |
| 3/7. ՀՀ կառավարության 2011 թվա-կանի սեպտեմբերի 8-ի N 1372-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրի իրականացման միջոցառումների համակարգում | - ծրագրի միջոցառումների իրականացման մոնիթորինգ, ծրագրի ընթացիկ և նպատակային ցուցանիշների համադրում և ծրագրի արդյունավետության գնահատում | Ա. Գալստյան<br>Ա. Սիմոնյան | Զարգացման վարչություն | Յուրաքանչյուր եռամսյակ |